

Ի. Ն. ՅԱԿՈՎԼԵՎ ՅԵՎ. Տ. ՅՈՒ. ԲԵՐՄԱՆ

ԻՆՉ ՀԻՎԱՆԴԻԹՑՑՈՒՆ Ե ԳՐԻՊԸ
Յ Ե Վ
ԻՆՉՊԵՍ ՊԵՅ.ԲԱՐԵԼ. ՆՐԱ ԴԵՄ

ԹԵՏՐԱՆ

1938

ՏԵՐԵՎԱՆ

31 JAN 2018

Ի. Ն. ՅԱԿՈՎԼԵՎ ՁԵՎ Ֆ. ՅՈՒ. ԲԵՐՄԱՆ

ԻՆՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Ե
ԳՐԻՊԸ
ՅԵՎ
ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ ՆՐԱ ԴԵՄ

ԽԵՏԱՐԱՆ

1938

ՅԵՐԵՎԱՆ

ԳՐԻՎԻ ԳԵՄ ՊԱՅՔԱՐԵԼԸ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ-
ՆԵՐԻ ԳՈՐԾՆ Ե

Գրիպն ամենատարածված հիվանդություններից մեկն ե: Ժամանակ առ ժամանակ գրիպի բռնկումներ են առաջ գալիս: Այդ բռնկումներն ընդզրկում են համարյա ամբողջ ազգաբնակությունը, ինչպես այդ յեղափ, որինակ, 1918 թվին:

Բայց նույնիսկ այն ժամանակ ևս, յերբ գրիպը համաձարակի բնույթ չի ընդունում, գարձյալ գգալի թվով հիվանդներ են լինում, և մենք այդ հիվանդություններից բավականին վնասվում ենք: Բանն այն ե, վոր միլիոնավոր բանվորական որեր և կոլտնտեսականների աշխարհը են կորչում, միլիոնավոր սուբլիներ են ծախսվում անաշխատունակ որերի համար վճարելու և հիվանդացաներին բուժելու նպատակով:

Գրիպից առաջացող մահացությունը մեծ չե: Գրիպի յերկարատև, ձգձգվող հիվանդությունը հազվագեց ե: Սակայն, պետք ե հաշվի առնել,



1-36 8381-

վոր գրիպը հաճախ բարդություններ ե տալիս, ինչպես, որինակ, թոքերի բորբոքում։ Դրա հետևանքով հիվանդությունը կարող է յերկար ժամանակով խախտել մարզու առողջությունը։

Մրանից պարզ յերևում ե, վոր գրիպի գեմ մղվող պայքարը պետք ե բոլոր բանվորների, կոլտնտեսականների, աշխատավորների գործըլինի։ Յուրաքանչյուր աշխատավոր պետք ե զիտենա, թե ինչպես պետք ե զգուշանա գրիպից։

ԳՐԻՊԸ ՎԱՐՄԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Ե

Գրիպը վաբակիչ հիվանդություն եւ Գրիպն առաջ ե դալիս միկրոբներից, վորոնք մեծ քանակությամբ գտնվում են հիվանդի թոքերում, բրոնխիներում (бронхи) կոկորդում, քթաստուգնում և բերանում։ Խոսելու, հաղալու և փոշտալու ժամանակ հիվանդը միկրոբները թքի ու լորձի մանրը մասնիկների հետ զուրս ե շպրտում շրջապատող տարածության մեջ, առարկաների ու մարդկանց վրա։

Գրիպի միկրոբները չափազանց անտոկուն են։ Թքի և լորձի չորանալու դեպքում, արևի լույսի ազդեցության տակ միկրոբները վոչնչա-

նում են մի քանի ժամվա ընթացքում։ Իսկ ավելի շուտ, մի քանի բոպելի ընթացքում միկրոբները վոչնչանում են բարձր ջերմաստիճանի ազդեցությունից (չոր շոգ, յեռացում)։

Միկրոբների փոխանցումը հիվանդներից առողջներին՝ կարող ե կատարվել հիվանդների հետ խոսելիս, նրանց հազարու և փոշտալու ժամանակ։

Այդ բանը պատահում է նաև հիվանդի հետ միենալուն անկողնում քնելուց, ընդհանուր ամանից ուտելու և խմելու ժամանակ, յերեսսրբիչները, թաշկինակները միտաեղ գործածելուց և ալին։

Գ. Ր. Ի. Պ. Ն. Թ. Ա. Յ. Ք. Բ.

Գրիպը շատ զանազանակերպ ե ընթանում։ Ամենից հաճախ նա ընթանում ե թեթև ձեմով։ Այդ գեղքում հիվանդացածը հատուկ խնամքի և բուժման կարիք չի ունենում։ Գրիպի այդ ձեւն իրեն զգալ ե տալիս հարբուխով, հազով, դիսացավերով։ Ջերմաստիճանը չի բարձրանում, կամ թե բարձրանում ե շատ անհան։

Թեթև ձեռվ հիվանդացածներն առողջանում են 3—5 որվա ընթացքում։

Ավելի ծանր դեպքերում մարմսի ջերմաստիճանը բարձրանում է մինչև 39 և ավելի, հազն ու հարբուխը կարող են սաստկանալ: Հիվանդը մեծ ջարդվածություն ու թուլություն ե զգում: Նա ստիպված է լինում պառկել անկողնում:

ԳՐԻՊԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գրիպով հիվանդանալու կասկածներ յերեալու դեպքում, անհրաժեշտ է կիրառել հետեւյալ միջոցները.

1. Հիվանդին ուղարկել բուժաբան բժշկի մոտ, կամ թե ոգնություն հասցնալ բժշկին հրամիրել սունեն:

2. Վորքան հնարավոր ե՝ հիվանդին առանձնացնել առողջներից: Դրա համար պետք է ունենալ՝ առանձին անկողին, աման, յերեսսրբիչ և տնային գործածության այլ առարկաներ: Հիվանդին մահճակալի մոտ դնել թքաման (նրա մեջ լցնել լիզոլի Յատոկսային լուծույթ):

3. Այն սենյակում, վորտեղ պառկած է հիվանդը, մաքրություն պահպանել: Ամեն որ, առավոտյան ու յերեկոյան, թաց շորով մաքրել հատակը (թաց շոր փաթաթած խողանակով ավել): Կահկարասիքի և տնային գործածության լել):

առարկաների փոշին մաքրել թաց շորով: Որպես կան 2 անգամից վոչ պակաս ողափոխել սենյակը (բանալ ողանցքը), նախապես տաք ծածկելով հիվանդին:

4. Հիվանդի կեղառոտ սպիտակեղենը, սավանները, թաշկինակները, յերեսսրբիչները յեռացնել սողայի կամ մոխրաջրի լուծույթի մեջ և այս բանից հետո միայն լվանալ: Կարելի յենակ այդ բոլոր իբրեւ դնել առանձին թասի մեջ և առատորեն թթվի լիզոլի Յատոկսային լուծույթով:

5. Հիվանդի ամանն, ոգտագործելուց հետո, յեփ տալ ջրի մեջ:

6. Վոչ մի դեպքում չուտել հիվանդի ուտելիքի մնացորդները:

7. Հնարավորության սահմաններում, առանձնացնել մեկին՝ հիվանդին խնամելու համար: Խնամողն ամեն անգամ, հիվանդի, կամ նրա ամանի և սպիտակեղենի հետ շփմբելուց հետո, պետք է ձեռքերը լվա սապոնով: Խնամողը պետք է հազնի խալաթ, կամ փափուկ գործվածքից մի այլ հագուստ:

8. Հիվանդները պետք ե ուշադրությամբ կատարեն բժշկի տված բոլոր խորհուրդները: Հազարու և փոշտալու ժամանակ քերանն ու քիթը

ծածկեն թաշկինակով։ Թքեն միայն թքամանի մեջ։ Մինչև լիսվին առողջանալը չհամբուրեն յերեխաներին ու հարազատներին։

9. Գրիպով նույնիսկ թեթև հիվանդանալու դեպքում ել հասարակական վայրեր (կիսո, թատրոն, ժողով և այլն)՝ չհաճախել։

10. Յերբ կատկած ելինում, թե յերեխան հիվանդացել ե գրիպով, չպետք ե թույլ տալ վոր նա զնա դպրոց, մանկապարտեզ, մսուր և այլն։

Յեթե գրիպով վարակվելու վտանգ կա, հիվանդությունը կանխելու նպատակով, վորպես միջոց, խորհուրդ ե տրվում ընդունել որական 1—2 հար «կալցեքս»։ Այդ դեպք վաճառվում ե բոլոր դեղատներում։ Այդ զործ ե ածվում նաև գրիպը բուժելու նպատակով։

ՄԱՐՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ ՄԻԶՈՅ Ե ԳՐԻՊԸ
ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մաքրություն պահպանելը խիստ կարևոր միջոց ե ընդհանրապես վարակիչ հիվանդությունները և մասնավորապես գրիպը կանխելու համար։

Ենթի մաքրություն, վորտեղ աշխատում են ու ապրում, ողի մաքրություն բանելու և բնա-

լիլի շենքերում, տնային գործածության առարկաների մաքրություն, մարմնի, սպիտակեղենի, հագուստի մաքրություն—ահա ամենահուսալի միջոցը՝ վարակիչ հիվանդությունները, այդ թվում և զրիպը, կանխելու համար։ Բոլ մաքրության վրա միջոցներն են առանձնապես կարեոր՝ կյանքում կիրառելու համար։

Այդ միջոցները հետևյալներն են.

1. Ամեն որ հեռացնել շենքից աղբը, թափաթիւներն ու փոշին։ Հատակը մաքրել թաց շոր փաթաթած խոզանակով, այդպիսի շորով մաքրել նաև փոշին։

2. Խոնամքով ողափոխել բանելու և բնակելի շենքերը։

3. Հատակին չթքել, այլ թքամաններ գործածել։

4. Վոչ վորի հետ չուտել ու չխմել մեկ ամանից։

5. Ուշադրությամբ հետեւել հասարակական աննպի ձեռնարկությունների մաքրությանը։ Բոլոր ամանեղենը, մանավանդ զգալներն ու բաժակները, այդ ձեռնարկություններում պետք ե լավ լվանալ տաք ջրով, սապոնով կամ սովայով։

6. Հազարու և փոշտալու ժամանակ մի կողմ

շուռ կալ հարեանից կամ խոսակցից, կամ թե
ձեռքի ափով կամ թաշկինակով ծածկել բերանն
ու քիթը:

7. Ռւտելուց առաջ խնամքով լվանալ ձեռ-
քերը ջրով ու սապոնով:

8. Խուսափել բարեկելիս ձեռք թոթվելուց:

9. Հետեւել բերանի մաքրությանը, ամեն որ
մաքրել ատամները և ողողել բերանը:

10. Քնել առանձին անկողնում, առանձնա-
պես չքնել նույն անկողնում այն մաքրկանց հետ,
վորոնց կարելի յե կասկածել գրիպով հիվանդ
լինելու մեջ (հարբուխի, հաղի առկայության
և այլն):

ՈՐԳԱՆԻՉԱՄԻ ԱՄՐԱՊՈՒԴՈՒՄԸ ՎՈՐՊԵՍ ԳՐԻՊԸ ԿԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՅՑ

Գետք և հոգալ որգանիզմի ընդհանուր ամ-
րապնդման մասին: Գետք և խուսափել այն ամեն-
ից, ինչ վոր կարող է թուլացնել որգանիզմը:

Իսկ բնչ պետք է անել զրա համար: Դրա
համար անհրաժեշտ ե.

1. Ամրապնդել որգանիզմը՝ աստիճանաբար
ընտելացնելով իրեն՝ ամեն որ մարմինը մինչեւ

դոտկատեղը սենյակի ջերմաստիճան ունեցող
ջրով շփելուն կամ լվանալուն:

2. Ավելի հաճախ լինել թարմ ողում:

3. Վարժեցնել իրեն միշտ քթով շնչելուն:

4. Պարապել սպորտով ու մարմնամարզու-
թյամբ:

5. Խուսափել մրսելուց՝ վոտքերը թրջելուց
և մարմինը խիստ սառեցնելուց: Առանց վերնա-
զգեստի՝ տաք սենյակից ցուրտ տեղ զուրս չգալ:
Պայքարել վոտքերի քրտնոտության դեմ՝ հաճախ
լվանալով վոտքերը տաք ջրով ու սապոնով:
Հազուստն ու լոշիկները թրջելու գելքում ան-
պայման հանել և շտապ չորացնել:

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԻ ԳՐԻՊԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Գրիպի գեմ մղվող պայքարում կարելի յե-
ցնական հաջողությունների հասնել միայն վողջ
բանվորական ու կոլտնահսային հասարակայնու-
թյան ակտիվ մասնակցությամբ:

Սուաջին հերթին մեծ ակտիվություն և ինք-
նագործունեյություն պետք է ցուցաբերեն առող-
ջապահության զծով հասարակական աշխատանք

տանողները՝ խորհուրդների առողջապահական սեկցիաների անդամները, ձեռնարկություններում և խորհտնաեսություններում՝ առողջապահությանն ոժանդակության առաջակացների անդամները, բնակելի շենքերի և հանրակացարանների, կոլտնտեսությունների ու գվարոցների առողջապահության բջիջների անդամները, ինչպես նաև հասարակական սանիտարական լիազորները:

Իսկ ի՞նչ պետք է անեն առողջապահության հասարակական աշխատաղները զբիպի դեմ մղվող պայքարում:

Առաջին հերթին նրանց սկզբությունն արդ գործում հետեւյան է.

1. Նրանք կազմակերպում են առանձին ծախսեր և հիմնական վերակահավորումներ չպահանջող ամենահասարակ առողջապահական միջոցառումների անցկացումը: Նրանք պայքարում են հանուն մաքրության՝ բանելու և բնակելի շենքերում, հասարակական սպատագործման տեղերում—դպրոցներում, ճաշարաններում և այլն:

2. Նրանք կազմակերպում են աշխատավորների տարրեր խմբերի սոցմքցումը՝ մաքրության և հիգիենայի պահանջներն ել ավելի լավ պահպանելու և կատարելու համար:

3. Նրանք ստուգում են մաքրության ու հիգիենայի կանոնների կատարումը ձեռնարկություններում, բնակարաններում և հասարակական ոգտագործման տեղերում: Նրանք պարզում են այդ գործում յեղած թերություններն ու զանցառությունները և ձգում են վերացնել դրանք: Հատուկ ուշադրություն են զարձնում նրանք ճաշարանների, բուժեաների, յերկաթուղու կայարանների և հասարակական ոգտագործության այլ տեղերի սանիտարական գրության վրա:

4. Նրանք տարածում են գիտելիքներ գրիպիդի դեմ պայքարելու միջոցների վերաբերյալ: Նրանք ոգնում են զասախոսություններ, գեկուցումներ, զրույցներ, զրույցներ կազմակերպելու: Կազմակերպում են զրքերի բարձրածայն ընթերցանություններ, զրականություն վաճառելու և բաժանելու գործը և այլն:

5. Նրանք իրենց անձնական վարքով որինակ են տալիս մնացած աշխատավորներին, թե ինչպես պետք է պահել իրեն, վորպեսզի կարելի լինի պահպանել հիգիենայի պահանջները, չհիգիանդանալ և չվարակել իրեն շրջապատողներին:

ԳՐԻՊԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋԱՑՆԵՐՆ
ԻՐԱԳՈՐԾԵԼԻ ՅԵՆ ՅԵՎ ԳՈՐԾԱԴՐԵԼԻ

Այսպես են գրիպի դեմ պայքարելու միջոց-
ները։ Այս բոլոր միջոցները կարելի յեն հեշտու-
թյամբ իրակործել ու գործադրել։

Պետք ե միայն զիտակցել ու հասկանալ վոր
անհրաժեշտ և անշեղորեն իրազործել այդ միջոց-
ները։ Հարկավոր ե կամքի ուժ, վորպեսզի կյան-
քում ակտիվորեն կիրառվեն մաքրության հա-
մար մղվող պայքարի, գրիպի դեմ պայքարելու,
հիվանդությունները պակասեցնելու համար մըղ-
վող պայքարի բոլոր միջոցառումները։

Բանվորները, կոլտնտեսականները և բոլոր
աշխատավորները պարտավոր են միահամուռ ու
համերաշխ մասնակցել մաերաւրյան համար, առող-
ջուրյան համար, կուլտուրայի համար—սոցիալիս-
տական լավագույն կյանքի համար մղվաղ պայքարին։

Թարգմ. Ա.վ. Շաթիրյան
Պատ. Խմբ. բժ. Դուրինյան
Լեզվ. Խմբ. չ. Պետրոսյան
Տեխ. Խմբ. լ. Ոհանյան
Սրբագրիչ Ա. Արդաքանյան

Գլուխտի լիազոր՝ Ա. 4005. Հրատ. № 4570.
Պատվեր 339. Տիրագ 3000.

Թուղթ 72×105. Տպագր. 1 մամ.
Մեկ մամ. 24200 նշան. Հեղինակ՝ Օ. 53 մամ.
Հանձնված ե արտադրության 27 մարտի, 1938 թ.
Ստորագրված ե տպագրության համար 22 հունիսի, 1938 թ.

Պետհրատի 1 տպարան, Յերևան, Լենինի 65

20

ՀՀ Ազգային գրադարան



NL0928089

2⁰ ИНП 1938
Февр 20 ч.

393

3683

И. Н. Яковлев и Ф. Ю. Берман
Что за болезнь грипп
и
как ей им бороться
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.